



Հայկական Գրչադիրք

Մատենադարան Ս. Ղազարու

Ս. ՄԱՏԹԷՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

1. — Աւետարան Մլքէ թագուհւոյ. Թ. 1144, ամ գրչութեան 902

St. MATTHIEU

Tétraévangile de la reine Melkié, N. 1144, an 902

Հ Ա Յ Ո Ս Կ Ե Դ Ա Ր Ը

Ե Ի

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ



ՆԶՊԻՍԻ՝ խանդավառութեամբ և յարգանքով է՝ որ հայ ազգն ամբողջ, հակառակ իր ճգնաժամին և տառապանքներուն, կը տօնէ տարւոյս հոգեւոր — զրական Հազարհինգհարիւրամեակը իր Ոսկեդարին և հայ թարգմանութեան Ս. Գրքին, գոնէ պահ մը մոռնալու համար իր ցաւերը՝ փառաւոր անցեալի մը յիշատակով։ Ս. Գրքին, յիշատակ մը փառքի և լոյսի, որ իրաւունք կու տայ իրեն՝ ո՛չ միայն ապրելու դարուս ամէնէն զարգացած և բարեկիրթ ազգերու կողքին, այլ և պարծելու թէ ինքն ալ ժամանակով եղած է հզօր, անկախ և բարգաւաճ ժողովուրդ մը, երբ տակաւին ասոնք բարբարոս ազգեր էին, — ժողովուրդ մը՝ որուն անունը քանդակուած է սեպագիր արձանագրութեանց վրայ, աշխարհահռչակ պատմագիրներու՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Տակիտոսի գրութեանց մէջ, և մանաւանդ գերագոյն մատենին՝ Ս. Գրքին էջերուն վրայ։ Եւ իրաւացի, ամէն զարմանքէ վեր է՝ հայուն այդ երկաթէ կամքը, որով ապրեր է և կ'ուզէ ապրիլ, դարերու անընդհատ հոսանքէն մղուած, մաքառելով իր գոյութեան սպառնացող փոթորիկներուն դէմ, կուրծք տալով այն բոլոր վայրագ հարուածներուն, աղէտներուն, աւերածներուն և անցնելով արեան ճապաղիքներու մէջէն, որոնք պիտի կըրնային անճիտել՝ բնաջինջ ընել ո՛ր եւէ ազգ և ժողովուրդ՝ բաց ի հայէն, որ այսօր ո՛չ միայն կայ և կ'ապրի, այլ և կը մրցի շատ ցեղերու հետ՝ իր զրականութեամբ, իր արուեստներով, առուստերով և նոյն իսկ

փոքրիկ պետութիւն մ'ունի, ափ մը իր հայրենի հողէն, գերմարդկային ճիգեր թափելով մեծագունին և լաւագունին ձգտելու, և երազելով անցեալ փառքին ու մեծութեան բեկորներուն վրայ փայլուն ապագայ մը կերտել իրեն։ Եւ ո՛րն է հայուն այդ մեծ ու փառաւոր անցեալը, եթէ ո՛չ իր քաղաքական պատմութիւնը, իր զրական արտադրութիւնները, իր արուեստները, և վերջապէս իր հոյակապ Ոսկեդարը։ Ոսկեդար... սոյն մոգական բառը լրսելուն՝ ո՛ր հայուն սիրտը թունդ չ'ելլեր, որպիսի յիշատակներ չ'են արթնար մըտքին մէջ, ինչ վեհ՝ լուսաւոր և շքեղ տեսիլներ չ'են պատկերանար առջեւ, որոնք պատռելով տաճարէնէն դարերու թանձր վարագոյրը, կը տանին մեզ ձիւնափայլ Մասիսին ստորոտը, փրփրացող Երասխին ափերը, Այրարատեան ծաղկալից դաշտին վրայ, Վաղարշապատի վեհափառ արքունիքին մէջ, ուր երեք անգուգական դէմքեր, — Սահակ, Մեսրոբ, Վռամշապուհ, — կամքերու և ճիգերու հրաշալի միութեամբ մը, կը հոգան՝ կը խոկան երկնել և իրազործել այնպիսի ծրագիր մը, որով ապրի յաւերժապէս հայը, — կանգնել այնպիսի անմահական կոթող մը զրականութեան, որուն առջեւ՝ ո՛չ միայն հայը, այլ ո՛ր եւ է զրագէտ՝ ո՛ր եւ է միտք, որ գեղեցկին ճաշակը ունի, խորին յարգանք և հիացում զգայ։ Այդ կոթողին՝ այդ լուսոյ և իմաստութեան տաճարին խարիսխը կը կազմեն, 1. — Հայ տառերուն գիւտը, 2. — Ս. Գրքին հայերէն թարգմանութիւնը, 3. —

Մեր մեծանուն անմահ Ս. Հայրերը՝ Սահակ և Մեսրոպ իրենց հոյանուն աշակերտներով:

Թող ներուի ինծի հոս քանի մը խօսքով ներկայացնել մեր տառերու գիւտին՝ և հետեւաբար մեր Ոսկեդարուն՝ երեք կազմակերպիչները իրենց խոշոր գծերուն մէջ:

Ա. — ԵՐԵՔ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ՄԵՐ ՈՍԿԵԴԱՐՈՒՆ.

Վաւարապուհ՝ ամենուս ծանօթ է, — հայրենասէր, ուսումնասէր, խաղաղարար և ազնուական թագաւորի տիպարը, — որուն նմաններ շատ քիչ կ'երեւին դարերու շրջանին: Յաջորդելով 391-ին իր երէց եղբոր՝ Խոսրով Չորրորդին, քսանըմէկ տարի խաղաղութեան մէջ պահեց Հայաստանը, իր հեռատես, խոհական և քաղաքագէտ վարչութեամբ: Շատ հազուագիւտ երեւոյթ մը մեր պատմութեան մէջ: Ասով գեղեցիկ պատեհը ունեցաւ աջակցելու մեր Ոսկեդարին հիմնուելուն, որով անմահացուց անունը՝ Սահակայ և Մեսրոբի անուններուն հետ:

Ս. Սահակ՝ Մեծն Ներսիսի արժանաւոր որդին, Լուսաւորչի արեան հետ միացուցած նաեւ արքունական արին, ամենաբարձր և խնամուած կրթութիւն ստացած, մանկութեան օրերուն՝ հելլէն միջավայրի մէջ սնած ու զարգացած, յոյն լեզուին և գրականութեան այնքան խորապէս տիրացած, որ կը գերազանցէր քան բուն իսկ հելլէն գիտունները, ինչպէս կը վկայէ Ղ. Փարպեցին, կատարելապէս հմուտ հռետորական և փիլիսոփայական արուեստին: Իր յիսնամեայ կաթողիկոսութեան շրջանին, ոչ միայն ամուր նեցուկն եղաւ հայ պետութեան՝ աւելի քան բոլոր զինուորական ուժերը եւ զիւսնագիտական հնարքները, այլ և իր անվիճելի հեղինակութեամբ՝ յարգելի և պատկառելի եղաւ մեր ազգին կործանումը նիւթող երկու հզօր թագաւորներուն: Պժրախտաբար մեր ըմբոստ իշխանները միայն չգիտցան յարգել այդ

մեծ Հայուն ձիրքերն և հեղինակութիւնը, և այնքան կուրացան որ զացին մատնեցին պարսիկ պետութեան ձեռքը՝ զինքը, թագաւորը, կրօնքը և հայրենիքը: Կարելի է երեւակայել քան զայդ աւելի նողկալի ոճիր մը, որ այնպիսի մահացու հարուած մը տուաւ անոր սրտին, որ ծերունի Հայրապետը՝ քաշուած Աշտիշատ իր գիւղին մէջ՝ գրականութեան և թարգմանութեան միայն նուիրեց իր վերջին տարիները:

Ս. Մեսրոբ կամ Մաշթոց վարդապետ, անտարակոյս Մամիկոնեան տոհմէն սերած, կրնայ իրաւամբ պարծիլ՝ իր հիմնադիրը մեր Ոսկեդարին և մեր գրականութեան նախահայրը: Ինքն ալ, Ս. Սահակի նման բարձր կրթութիւն և զարգացում ստացած, հմուտ յոյն, ասորի և պարսիկ լեզուներուն, նախ՝ Ս. Ներսէս Պարթեի քարտուղար, յետոյ՝ արքունի ղալի, իր տոհմին ազնուականութեամբ՝ եւս աւելի իր տաղանդաւոր մտքով և մեծարժէք ձիրքերով՝ զինուորական ամէնէն բարձր աստիճաններուն հասաւ: Ան՝ մեր գրականութեան հիմնադիրն է, ոչ միայն հայ տառերուն գիւտով և նախաձեռնարկ ըլլալով Ս. Գրքին թարգմանութեան, այլ նաեւ հայ վարժարաններուն հիմնարկութեան ուսուցիչ և դաստիարակ ըլլալով: Անոր ամբողջ կեանքը՝ հրաշալիք մ'է անհրեւակայելի գործունէութեան, — քարոզիչ և առաքեալ, կրօնքի և գիտութեան ռահվիրայ մը, կրթիչ ամբողջ սերունդներու, լուսաւորիչ մը ազգերու և աշխարհներու, — որուն առջեւ չափազանց նեղ կու գային Հայաստանի սահմանները: Կը տեսնենք զինքը Կովկասէն մինչեւ Միջագետք և Ասորիք, — Վրաց, Մարաց և Ալուանից աշխարհներէն մինչեւ Եդեսիա, Ամիդ, Անտիոք, Մելիտինէ, Բիւզանդիոն, ուր թագաւորներ, իշխաններ, եպիսկոպոսներ, ժողովուրդներ ընդ առաջ կ'ելլէին իրեն, ամէն տեղ և ամենուն սրբելի, յարգելի և զրեթէ պաշտելի՝ իր գիտութեան և սրբութեան համար:

Բ. — ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՐԹԸ ՕՏԱՐ ՆՇԱՆԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐ.

Սոյն երեք հոյակապ անձնաւորութիւնները — Վաւարապուհ, Սահակ, Մեսրոբ — երեքն ալ իրենց ծննդեամբ, ուսումով և կրթութեամբ՝ կը պատկանին Չորրորդ դարուն, որոնք կը տեսնէին ցաւով սրտի, թէ ինչպէս մեր ուշիմ և տաղանդաւոր երիտասարդութիւնը՝ չափազանց ուսումնասէր, բայց անկարող յազեցնելու իր բնիկ հողին վրայ՝ ուսման և գիտութեան անհուն ծարաւը, օտար հորիզոններ կ'երագէին, «և բազում թողալօք ու հեռագնաց և բազմաժամանակեայ դեգերմամբ», ինչպէս կ'ըսէ Փարպեցին, կ'երթային Եդեսիա, Անտիոք, Աղեքսանդրիա, Աթէնք, Բիւզանդիոն, ուր կ'աշակերտէին նշանաւոր յոյն հռետորներու և իմաստասէրներու, որոնցմէ ոմանք նոյնիսկ ընկերակից ըլլալով Ս. Բարսղի և Գրիգոր Աստուածաբանի, ինչպէս կը վկայէ վերջինս իր մէկ ճառին մէջ: Մեր այդ պատանիներէն ոմանք այնքան խորապէս կը հմտանային յոյն լեզուին, հռետորութեան և իմաստասիրութեան, և մտքի այնպիսի նրբութիւն մը կը ստանային, որ յաճախ վէճի բռնուելով յոյն ուսանողներուն հետ, եթէ ոչ միշտ՝ այլ յաճախ մերիներն էին յաղթողը: Հայ մտքին և հանճարին սոյն պատուաբեր վկայութիւնը ունինք նոյնիսկ Գր. Նազիանզացիէն, որ յիշեալ ճառին մէջ կ'որակէ Աթէնքի հայ ուսանողները «մտացի, ընդունակ և սրամիտ»: Այդ հայ ուսանողներէն մին՝ իր աննման տաղանդով և հանճարով՝ յաջողեցաւ բարձրանալ մինչեւ ուսուցչական գահին վրայ, — հայ մը՝ Պղատոնի և Արիստոտելի աթոռին վրայ՝ նոյնիսկ Աթէնքի մէջ, — որուն աշակերտներուն թուոյն մէջ կային երկու ապագայ մեծ Ս. Հայրեր՝ Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին, և ապագայ հոգիմայեցի կայսր մը՝ Յուլիանոս ուրացող: Անշուշտ կռահելիք թէ այս մեծ հայը ուրիշ մէկը չէր՝ բայց քրիստոնեայ Պարոյր Հայկազն, որուն՝ նոյնիսկ արեւ-

մուտքի ոստանը Հռովմ՝ յարգանքի մեծագոյն ցոյցն ընծայեց, իր նշանաւոր հրապարակին մէջ՝ Կիլիկոնի արձանին կից՝ կանգնելով անդրի մը ի պատիւ մերս Պարոյրի, քանդակելով ստորեւ. Regina rerum Roma, regi eloquentiae, այն է. «Հռովմ թագուհի (իրաց) աշխարհի, թագաւորին պերճախօսութեան»:

Այսպէս, ուրիշ հայ երիտասարդներ, իրենց հանճարով և կարողութեամբ, ոչ միայն ուսուցչական և քաղաքական՝ այլ նոյնիսկ եկեղեցական բարձր աստիճաններ ձեռք ձգեցին, ինչպէս կը կարդանք Ս. Բարսղի թուղթերուն մէջ, որ կը յիշէ բաւական թուով հայազգի եպիսկոպոսներ իր թիմին մէջ, որոնց մասին ընդհանրապէս գովեստով կ'արտայայտուի: Սակայն, ինչ օգուտ, որ այսպիսի կարող և ընդունակ ուժեր, — որոնք թէեւ պատուաբեր հայ անուան, — կ'օտարանային դժբախտաբար՝ մոռնալով իրենց ազգը ու հայրենիքը, որով կը տուժէր մեծապէս մեր գրականութիւնը: Իսկ բնիկ հողին վրայ մնացող մեր երիտասարդութիւնը, զերծ ազգային ուսումէ և կրթութենէ, և միւս կողմանէ անտեղեակ յոյն և ասորի լեզուներուն, նոյնքան անպէտ և անշահ կ'ըլլային ազգին և հայրենիքին, դատարկութեան մէջ մասնելով իրենց ժամանակը, շատ քիչ տարբերելով հեթանոսներէն իրենց վարքով ու բարքով, միայն աշխարհիկ զբօսանքներու, գուարճութեանց և երգերու անձնատուրք, ինչպէս կը գանգատի Բիւզանդ ժամանակին պատմիչը:

Գ. — Ս. ՄԵՍՐՈՐ ԿԸ ԶԳԱՅ ՀԱՅ ՏԱՌԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԵՏԲԸ.

Ս. Մեսրոբ՝ այս բոլորին ականատես և մտահոգ, — որուն մտքին մէջ ամէնէն մտայն գոյներով կը ներկայանար ազգին ներկան ու ապագան, — մէկդի կը նետէ սուրը՝ կ'առնէ զրիչն ու խաչը, կը մերկանայ զինուորական պատմուճանը, կը հագնի վանական սքեմը, «ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր գանձն», կ'ըսէ



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ԳՐԻՍՏՈՍԻ

2. — Աւետարան Մլքէ թագուհւոյ. Թ. 1144, ամ գրչութեամ 902

L'ASCENSION DE N. S.

Tétraévangile de la reine Melkié, N. 1144, an 902

Կորին, կը փակուի լռութեան ու միայնութեան մէջ, երկնելու և յղանալու հոն այն մեծ ծրագիրը, որով պիտի փրկէր Հայութեան Կրօնքը, Հայրենիքը և Ազգութիւնը:

Բայց ո՞րչափ աւելի զգաց հայ տառերուն և գրականութեան անհրաժեշտ պէտքը, երբ խումբ մը աշակերտներով գնաց քարոզելու Գողթն գաւառին մէջ, որուն բնակիչները տակաւին հեթանոս բարքերով վարակուած, Քրիստոնէութեան հինգերորդ դարուն՝ դեռ աստուածներուն ու Վահագնի պաշտամունքը կը կատարէին, զիւցազուններուն արութիւնները նուազելով բամբակներով, ուրիշ բան չերազելով այն գինեւէտ երկրին շէն ու զուարթ բնակիչները՝ բայց կայթել ու պարել, ցնծալ, վայելել ու երգել «գիւրեանց երգս առասպելաց վիպասանութեան», ըստ բացատրութեան Բիւզանդի: — Հարկ է դիտել տալ հոս անցողակի, որ Գողթան երգերուն այն սիրալի նշխարները, որոնք հասեր են ձեռքերնիս շնորհիւ Խորենացւոյն և Գր. Մագիստրոսի, բանասիրական տեսակէտով թանկագին գանձեր են մեզի համար, որոնք կը հաւաստեն թէ նախ քան Հինգերորդ դարը ունեցեր ենք սիրուն, ճոխ ու կենսաւէտ գրականութիւն մը քնարերգական, բերանացի աւանդուած սերունդէ սերունդ, որուն ներդաշնակ լեզուն և զայն ոգեւորող զիւցազնական շունչը՝ իսկապէս հիացուցիչ բան մ'ունին իրենց մէջ:

Կարելի է երեւակայել թէ Մեսրոբի նման իստակրօն վանականի վրայ ինչ ազդեցութիւն գործեցին այդ հեթանոս երգերը և զիցական պաշտամունքը, որոնցմէ սաստկապէս յուզուած և դառնացած, կը յիշէր Ս. Գրքին հոգեշունչ երգերը և Սաղմոսները, և կը խորհէր՝ թէ ինչո՞ւ ասոնց պիտի չերգուէին հայ ժողովուրդին բերնէն, և փոխանակ վիպասանական առասպելներուն՝ ինչո՞ւ մարգարէներուն վսեմ տեսիլները պիտի չոգեւորէին անոնց երեւակայութեան թռիչները: Այս անհրաժեշտ պահանջն էր՝ որ կը մղէր զինքը օր առաջ թարգմանելու Ս. Գիրքը և ժողովուրդին ձեռքը տալու, որուն ընթերցումը պիտի բարոյացնէր և ազնուացնէր մտքերը և սրտերը: — Կարելի էր սակայն այդ՝ առանց հայ տառերու:

Գ. — ՉՈՒՆԷԻՆՔ ԱՐԴԵՐՔ ՏԱՌԵՐ ԿԱՄԳԻՐ Ս. ՄԵՍՐՈԲԷՆ ԱՌԱՋ.

Հոս բնականաբար այն հարցը կը ծագի, թէ արդեօք Ս. Մեսրոբէն առաջ հայ ազգը ունեցած չէ՞ տառեր, գրեր, կամ ո՞ր եւ է ձեւով նշաններ, որոնցմով կարող ըլլար արտագրել և փոխանցել յաջորդներուն իր մտածումներն և զգացումները: Կարելի է մտածել, թէ հայ ժողովուրդը այնքան դարերէ ի վեր գոյութիւն ունեցող, անընդհատ շփումի մէջ Ասորեստանեայց, Պարսից, Ասորեոց, Ֆունաց, Հռովմայեցոց և ուրիշ զարգացած ազգերու հետ, անոնցմէ փոխ առած չըլլայ զարգացման ու քաղաքակրթութեան ամէնէն տարրական բանը: Կարելի է երեւակայել թէ մեր Տիգրանները, Արտաշէսները, Տրդատները, ո՞չ միայն աշխարհակալ՝ այլ և ուսումնասէր, կրթասէր և հելլենասէր թագաւորներ, — որոնք իրենց դրացի երկիրներէն Հայաստան բերեր մուծեր էին անոնց կիրթ սովորութիւնները, երգերը, թատերական ներկայացումները, կրօնական պաշտամունքը, անոնց արուեստները, եւայլն, — անտեսած ըլլան միայն գիրը՝ գրականութիւնը, որով միայն պիտի կրնային յաւերժացնել իրենց պանծալի արարքները:

Արդի հայ և օտար բանասէրներէն ու մանր կ'ենթադրեն, թէ անկասկած ունեցած ըլլալու ենք ո՞ր եւ է այբուբեն մը, սեմական տառերու վրայ ձեւուած, թեւեւ միայն բաղաձայններէ կազմուած, և փոխանակ ձայնաւորներու՝ կէտերով կամ նշաններով բացատրուած, եւն: Ուրիշներ կը կարծեն՝ թէ մերիները պահաւ կամ զանգիկ և կամ տիրանեան կոչուած տառերը գործածած ըլլան, կամ ուրիշ ո՞ր եւ է ձեւով գրեր՝ հայկական հնչումները արտաբերող, և անոնց նման

զանազան կարծիքներ, որոնցմէ և ո՛չ մին գոհացուցիչ է: Այսչափը սակայն անտարակոյս է, որ մեր ազգը՝ իրեն յատուկ տառեր չունենալով՝ ստիպուած եղեր է կամ դրացի և կամ տիրապետող ազգերուն լեզուն և գրերը գործածել քաղաքական և դիւանագիտական խնդիրներուն համար, ինչպէս, օրինակ, պարսկերէն և յունարէն, իսկ քրիստոնէութենէն վերջը եկեղեցական պաշտամանց համար՝ ասորերէն լեզուն և տառերը: Բայց այդ յիշեալ լեզուներէն և ո՛չ մէկուն տառերով կարելի էր երբեք գրել և առգանել հայ լեզուն, ինչպէս ցոյց կու տայ Գանձեղան կոչուած նշանագրերուն փորձը: Այս մասին բնականաբար մեր Հինգերորդ դարուն հեղինակները պիտի կրնային չափով մը լոյս տալ մեզի. և սակայն, անոնք չափազանց լուռ, տարտամ և անորոշ են: Կորին, ամէնէն վստահելի և լուրջ պատմիչը, ո՛ր եւէ ակնարկ չ'ընէր այս նկատմամբ: Խորենացին, որ միայն եօթը ձայնաւորներուն գիտքը կ'ընծայէ Ս. Մեսրոբի, կը թուի հաստատել թէ բաղաձայն տառերը ունէինք արդէն: Իսկ Փարպեցին կ'ըսէ, թէ անոր համար մանաւանդ կու լար՝ կը տառապէր երանելին Մաշթոց, որովհետեւ լսած էր թէ «գոն նշանագիրք հայերէն լեզուոյս». ասով թերեւս Գանձեղան նշանագրերը կ'ակնարկէ: Միով բանիւ, երեք պատմիչներն ալ կը միաբանին թէ՛ Վառձապուհ տեսեր կամ լսեր էր որ Գանձեղանունով ասորի եպիսկոպոսի մը քով կային հայկական տառեր: Թագաւորին հոգածութեամբ Հայաստան բերուեցան այդ գրերը, որ առջի բերան անհուն հրճուանք պատճառեցին մերինս: Ներուն, յուսալով պահ մը հասած ըլլալ նպատակնուն: Սակայն երկամեայ փորձը ցոյց տուաւ թէ գոհացուցիչ չէին անոնք, չկրնալով արտաբերել բոլոր հնչումները և կապել վանկերը հայ լեզուին, ինչպէս կ'ըսէ Կորին. «Չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուոյն»: Ի՞նչ են ուրեմն այդ Գանձեղան նշանագրերը, և ի՞նչպէս բա-

ցատրել Ս. Մեսրոբի գիտքը հայ տառերուն:

Ե. — Ի՞նչ են ԳԱՆԴԵՂԱՆ ԿՈՉՈՒՄԾ ՆՇԱՆԱԳՐԵՐԸ:

Գանձեղան կոչուած նշանագրերը՝ պէտք է հասկնալ իբր տառերու շարք մը կամ ցանկ մը, այբուբենի կարգով դասաւորուած, ինչպէս կարծուած է ոմանցմէ, այլ ո՛ր եւ է գրութիւն մը հայ լեզուով՝ յոյն հին ալփաբետով գրուած, — անշուշտ հին ժամանակներէ եղած փորձ մը՝ հայերէնը օտար տառերով գրելու, — որ գոհացուցիչ չըլլալով՝ մէկդի թողուած էր: Եւ իրացնէ, ո՛չ յոյն ալփաբետը, և ո՛չ ալ իրանեան կամ սեմական լեզուները չունին ամբողջապէս հայերէնին այն բոլոր հագագային, կոկորդային, շջող և սուլող տառերը, որով կարող ըլլային ճշդիւ արտասանել մեր լեզուին հնչումները: Արդ, — ինչպէս կը հաստատէ Հ. Վ. Հացունի՝ իր վերջին հրատարակած գրքին մէջ «Ուղղագրութիւն և առգանութիւն հայերէնի», — Գանձեղան նշանագրերը ուրիշ բան չէին, բայց յիշեալ գրութենէն հանուած 21 տառեր՝ յոյն ալփաբետէն առնուած՝ քիչ մը հնացած ձեւերով, որոնց մէջ կը պակասէին մեր լեզուին յատուկ երկու ձայնաւորներ՝ ը և յ, ինչպէս հետեւեալ 13 բաղաձայնները՝ ժ, յ, ի, ժ, հ, ձ, շ, չ, չ, Վ, ը, ց, որոնք գոյութիւն չունին յոյն այբուբենին մէջ, և ճիշդ ասոր համար էր՝ որ Սահակայ և Մեսրոբի երկամեայ ջանքերը ի գերեւ ելան՝ Գանձեղան նշանագրերով հայ լեզուն գրելու փորձին մէջ: Որով կրկին հոգի և տագնապի մատնուած, ստիպուեցաւ Մեսրոբ անձամբ երթալ Միջագետք, նախ՝ առ Գանձեղան սորի, և յետոյ Եդեսիա և Ամիդ, ուր երկար ջանքերէ և ճիգերէ վերջը՝ յաջողեցաւ լրացնել Գանձեղան տառերուն պակասը, որ է՝ երկու ձայնաւորները և 13 բաղաձայնները, — որոնց ձեւերուն ստեղծումը և գծագրումը՝ Մեսրոբի հանձարեղ և գիւտաւոր մտքին ծնունդը կը համարի Կորին:

Ասով կ'ունենայինք 36 տառեր, որոնք լիովին կը լրացնէին հայ առգանութեան պէտքը: Ասկէ վերջն է՝ որ Մեսրոբ գնաց Սամուսաւ քաղաքը՝ նշանաւոր հելլենագիր Հոսիփանոսը գտնելու, որուն խորհրդով, աջակցութեամբ և առաջնորդութեամբ՝ վերջնական ձեւերը տուաւ հայ գրերուն, և յոյն տառերուն համեմատ դասակարգեց անոնց ընտրութիւնները կամ հնչական տարբերութիւնները, ինչպէս կ'ըսէ Կորին, այսինքն՝ երբագրները, կարճը և երկայնը առանձինը և կրկնաւորը: — Ահա համառօտիւ մեր գրերու գիւտին պատմութիւնը, և անոնց դասաւորումը՝ ըստ յոյն այբուբենին:

Ի՞նչ խօսք կամ գրիչ բացատրել կարող է Մեսրոբի ուրախութիւնը և գոհութիւնը, որ վերջապէս՝ յետ բազում ջանքերու և տքնութեանց՝ գտաւ գաղտնիքը, որով պիտի կրնար բանալ՝ հայ ազգին առջեւ՝ մինչեւ այն ատեն փակուած և անմատչելի խորհրդաւոր տաճարին դռները: Նորագիւտ տառերուն առաջին փորձն ըրաւ, «Առակաց» գիրքը թարգմանելով հայերէն, նոյն իսկ Սամուսաւ քաղաքին մէջ, աջակցութեամբ երկու աշակերտներուն՝ Յովհան Եկեղեցայնոյ և Յովսէփ Պաղնացոյ: Առաջին խօսքերը՝ որ Մեսրոբ վարդապետի աղամանդիկ գրչէն լոյս տեսան հայ լեզուով և հայ տառերով, եղան. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Ճշգրիտ պատկերը թարգմանչին լուսաւոր մտքին. «Իմաստութիւն, խրատ, հանճար», անա թեւերը՝ որոնցմով կը սաւառնի մարդս դէպի անմահութիւն և աստուածութիւն:

Ս. Գրքի հայ թարգմանութեան սոյն երախայրերը՝ նոյն ինքը Հոսիփանոս գրեց իր ձեռքով, Մեսրոբի աշակերտներուն ալ սորվեցնելով հայ գրչութեան արուեստը:

Մեսրոբ՝ գոհ իր տարած յաղթանակէն, ողջունելով եպիսկոպոսները՝ մանաւանդ Եդեսիոյ հմուտ և հայասէր Բարուսար, — ուսկից Ս. Գրքին ասորերէն ընտիր օրինակ մըն ալ առաւ, — փութաց մեկնեցաւ

Հայաստան, որուն դարձին աւետաւոր համբաւը կանխած քան զինքը, թագաւոր, կաթողիկոս, աւագանի, եպիսկոպոսներ, անհամար ժողովուրդ ընդառաջ ելեր էին մինչեւ Ռահ գետին ափը. զիմաւորելու հայ այբուբենին հեղինակը, որուն ընկերացան մինչեւ արքայանիստ ոստանը այնպիսի սրտալիր ովսանաներով, հոգեւոր երգերով և մեծաշուք հանդիսով, որպիսի յաղթանակ ո՛չ մէկ աշխարհակալ թագաւորի եղած էր երբեք: Ժամանակին ականատես պատմիչը այնքան յուզուեւ և խանդավառուեւ է այդ տեսարանէն, որ մեր հայ գրերուն ստեղծիչը կը նմանցնէ Մովսէս Մարգարէին, երբ սա՝ աստուածագիր պատգամներն առած՝ կ'իջնէր Սինայի բարձունքէն:

Բոլոր հայ աշխարհը, թագաւոր և իշխանք, բոլոր եկեղեցական դասը, մանաւանդ եռանդուն երիտասարդները և պատանիք, սուրբ վարդապետին շուրջը խռնած, կ'ողջունէին, կը խայտային, կը համբուրէին անոր հրաշագործ աջը և հայ տառերը, որոնք պիտի բանային իրենց առջեւ գիտական և գրական նոր և լայն հորիզոններ:

Անմիջապէս հայրենիքին ամէն կողմերը, ոստանէն և քաղաքներէն սկսած մինչեւ գիւղօրէից մէջ, դպրոցներ և վարժարաններ բացուեցան, ուր Սահակ, Մեսրոբ և իրենց աշակերտները կը հաւաքէին դաս դաս բոլոր ուշիմ, մտացի մանուկները, «մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, կ'ըսէ Խորենացին, փափկաձայնս և երկարօգիս», նոյնիսկ նախարարներուն և ազնուականներուն զաւակները, ուսուցանելու հայ այբուբենը և գրչութեան արուեստը, հնչեցնելու մայրենի անուշ բարբառը՝ փոխանակ ասորի խաղտալուր լեզուն:

Զ. — Ս. ԳՐԲԻՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՐԵՐԵՆԷ:

Հայ նորաստեղծ տառերուն առաջին նուիրագործումն եղաւ՝ Աստուածաշունչ



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
3. — Աւետարան Աղրիանուպոլսի. Թ. 887, ամ գրչութեամ 1007
LA S.te VIERGE
Tétraévangile d'Andrinople. N. 887, an 1007

Գրքին թարգմանութիւնը, մեծագոյն հրաշակերտը մեր Ոսկեդարուն, ուր ցոյց կու տան մեր թարգմանիչները իրենց զարմանալի կարողութիւնը՝ իբր գերազանց լեզուագէտներ և աննման հայագէտներ։ Ինքնագիր հեղինակ մը՝ կարող է ազատօրէն ցուցադրել իր լեզուն բոլոր ճշութիւնը և նրբութիւնները. մինչ թարգմանիչ մը՝ բնագրին հաւատարիմ մնալու համար, մանաւանդ կրօնական նիւթերու մէջ, ազատ չէ բառ մ'աւելի կամ պակաս դնելու, ամէն ճիգ և զգուշութիւն պիտի ընէ ճշգրտէն ըմբռնելու հեղինակին միտքը և վայելչօրէն բացատրելու զայն, որով պէտք էր որ խորապէս հմուտ ըլլար երկու լեզուներուն ալ։ Եւ իրօք կը տեսնենք Ս. Գրքի հայ թարգմանութեան մէջ խղճամիտ ճշգրտութիւն և հաւատարմութիւն բնագրին՝ միացած լեզուի և ոճի այնպիսի գեղեցկութեան և բնականութեան, որ կարծես սրբազան հեղինակները հայու պէս խորհեր և հայու պէս գրեր են։

Հոս ալ, ինչպէս ամէն բանի մէջ և ամէնուրեք, Մեսրոբ է առաջինը և պարագլուխը թարգմանիչներու շարքին մէջ, որ հազիւ Հայաստան դարձած, առանց թողլու իր ուսուցչական գործը, ձեռք զարկաւ թարգմանելու Հին ու Նոր Կտակարանները ասորի օրինակին վրայէն, օժանդակութեամբ Ս. Սահակայ և երէց աշակերտներուն, ինչպէս հաստատել կը թուին Կորեան խօսքերը, «ի ձեռն հաւասարելոցն (Սահակայ և Մեսրոբայ) հայաբարբառք հայերենախօսք զտան» (Հին և Նոր Կտակարանը)։

Ի՞նչ է ուրեմն այդ ասորի օրինակը Հին Կտակարանին, եթէ ոչ փեշիտոյ կոչուածը, որ կը նշանակէ պարզ, քրիստոնէութեան առաջին դարուն թարգմանուած երբայական բնագրին վրայէն, Աբգար թագաւորին և Աղդէ առաքելոյն հրամանով, որ լաւագոյն և ամէնէն հարազատ թարգմանութիւնն էր՝ պաշտօնապէս ընդունուած ասորի եկեղեցւոյն մէջ, զոր Ս. Եփրեմ և Ափրատ կամ Զգօն պարսիկ կոչուածը գործածեր են իրենց մեկնո-

ղական աշխատութեանց և ճառերուն մէջ։

Գալով Նոր Կտակարանին, երեք թարգմանութիւն ունեցած է ասորի լեզուով։ Նախ՝ Հաւարարքառը Տատիանոսի, Տիաքեսարոն կոչուած, որուն մէջ զանազան վրիպակներ սպրդած կամ մուծուած ըլլալով, արդէն Գ. դարուն արգիլուեցաւ անոր գործածութիւնը եկեղեցական իշխանութիւնէն։ Անոր փոխարէն՝ Ս. Եփրեմ կազմեց ուրիշ Հաւարարքառ մը, խոր



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու

ՅՈՎՀԱՆ ՊՐՈՔՍԻՄՈՍ
4. — Աւետ. Աղրիանուպոլսի. Թ. 887, ամ 1007
JEAN PROXIMUS
Tétraévangile d'Andrinople, N. 877, an 1007



հմտութեամբ և մեկնութեամբ, որուն ա- սորի բնագիրը կորսուած և հայերէն թարգ- մանութիւնը միայն պահուած է, լոյս տե- սած վեհերկ 1836-ին, և հայագէտ Մե- զինկեր գերմանացիէն՝ մեր վարդապետ- ներուն օժանդակութեամբ՝ լատիներէն թարգմանուած և հրատարակուած է 1876ին: — Երկրորդ թարգմանութիւնն է՝ Տա — Մեֆարրիշէ կոչուածը, որ կը նշա- նակէ անհատ, բաժանեալ, այն է՝ չորս Աւետարանները իրարմէ անջատ և առան- ձին, հակառակ Համաբարբառին՝ որ չորս Աւետարաններուն իրարու հետ միացում և ձուլումն է՝ ըստ նիւթին և ժամանա- կագրական կարգին: Իսկ երրորդը՝ նոյն- պէս Փեշիտտոյ կոչուած՝ ուրիշ բան չէ, բայց նախորդ թարգմանութիւնը՝ համե- մատուած և սրբագրուած Անտիոքի եկե- ղեցւոյն մէջ կարդացուած յունարէնին վրայէն, որուն հեղինակն է՝ մեզի ծանօթ նշանաւոր Բաբուլաս եպիսկոպոսը Եղե- սիոյ:

Ահա՛ այս երկու Փեշիտտոյ կոչուած Հին ու Նոր կտակարաններուն ասորի ընտիր օրինակներուն վրայէն կատարուեցաւ մեր առաջին հայ թարգմանութիւնը, որուն պատճառած անպատմելի ուրախութեան արձագանքը հասուցեր են մեզի Կորին և Փարպեցիին: Առաջինը կ'ըսէ. «Այն ժա- մանակ երանելի և ցանկալի եղաւ Հայաս- տան աշխարհը, երբ յանկարծ Մովսէս և բոլոր մարգարէներուն խումբը, աւետա- րանիչները և առաքեալները Պողոսի հետ եկան հայ բարբառով պատմելու մեզի Աստուծոյ մեծութիւնը և պատգամները», եւն.: Իսկ Փարպեցիին՝ աւելի եւս խան- դավառութեամբ կը գրէ. «Երբ Հայոց Հայ- րապետը Ս. Սահակ և երանելի Մաշթոց վարդապետը զուլս հանեցին իրենց մեծ և հոգեւոր գործը, այն է՝ Ս. Գրքին թարգ- մանութիւնը, անմիջապէս դպրոցներ հաս- տատուեցան, բազմաթիւ աշակերտներ և գրիչներ կը մրցէին իրարու հետ՝ Աստուա- ծաշունչին հայ թարգմանութեան բազմա- թիւ օրինակներ գաղափարելու և տարա- ձելու ժողովրդեան մէջ: Եկեղեցական

պաշտամունքը զարգարուեցան, վայելչա- ցան, գունդագունդ հաւատացեալք, արք և կանայք, կը վազէին, կը լեցնէին եկե- ղեցիները, Փրկչին տէրունական տօները և մարտիրոսներուն յիշատակը կատարե- լու հանդիսապէս՝ հայ լեզուով և հայ ե- ղանակներով... սաղմոսներ և սրբազան երգեր կը հնչէին ամէն տեղ, հրապարակ- ներուն, փողոցներուն և տուններուն մէջ», եւն.:

Ե. — Ս. ԳՐԲԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅ ԹԱՐԳ- ՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՕԹԱՆԱՍԵՒՅՑ ՕՐԻՆԱԿԻՆ ՎՐԱՅԷՆ.

Այդ առաջին թարգմանութիւնը սա- կայն, թէեւ ըստ կարելւոյն խնամքով և ձեռնհասութեամբ կատարուած, չէր կա- ռող զոհանքն Սահակայ նման նրբամիտ և գերազանցօրէն գեղեցկաճաշակ անձնա- տրութիւն մը, — մանաւանդ որ կը պակ- սէին հոն Երկրորդական ըսուած գրքերը, որով կատարեալ չէր, — և յետոյ ինքը՝ հելլենասէր մը՝ կը փափաքէր Բիւզան- դիոնի, Աղեքսանդրիոյ, Անտիոքի հոգա- կաւոր եկեղեցիներուն մէջ գործածուած Եօթանասնից յոյն օրինակին վրայէն, եթէ ո՛չ ամբողջապէս նոր թարգմանել, այլ գէթ համեմատել՝ ուղղել՝ լրացնել՝ յղկել նախկին թարգմանութիւնը: Այդ ժամա- նակ Հայաստան կերպով մը Պարսից բռն- նապետութեան տակ գտնուելով, խստիւ արգիւտուած էր հոն յոյն լեզուի և յոյն գրքերու գործածութիւնը, որով ստիպուե- ցան առժամաւ զոհանալ անով, մինչեւ որ պատեհ առիթը ներկայանար: Եւ յիշաւ, որ քաղաքական պայմանները չափով մը փոխուեցան, երբ Ս. Մեսրոբ Բիւզանդիոն երթալով՝ կայսեր և Հայրապետին հետ համաձայնութիւն գոյացուց, որով կարգ մը դժուարութիւններ հարթուեցան՝ ի նը- պաստ Յունաց բաժնին մէջ գտնուող հայե- րուն, և ընդհանրապէս մերիններուն առ- ջեւ նոր և լայն ասպարէզ մը բացուեցաւ:

Իրր 413-433 թուականներուն, խումբ մը մեր ամէնէն տաղանդաւոր երիտասարդ- ներուն, — Եզնիկ, Կորին, Յովսէփ, Ղե- տնդ և ուրիշներ, — Բիւզանդիոն զրկուե- ցան աւելի եւս հմտանալու յոյն լեզուին և գրականութեան, ինչպէս կ'ըսէ Կորին, «ուր ուսեալք և տեղեկացեալք, թարգմա- նիչս կարգէին ըստ հելլենական լեզուին»: Եւ ասոնք, երբ Հայաստան պիտի դառ- նային, Նիկիոյ և Եփեսոսի ժողովներուն կանոններուն հետ՝ առին նաեւ Աստուա- ծաշունչին «հաստատուն» և հարազատ օրինակներ, «և առաջի գնէին հարցն (Սա- հակայ և Մեսրոբայ) գրեթեալ կտակա- րանսն եկեղեցւոյ սրբոյ»: — Ի՞նչ էին այդ «հաստատուն» օրինակները Ս. Գրքին, ահա՛ երկու խօսքով:

Աղեքսանդրիոյ նշանաւոր վարդապետ Որոգինէս, դադրեցնելու համար հրէից և քրիստոնէից վէճերը Աստուածաշունչին երրայական բնագրին և յոյն թարգմանու- թեան մասին, իր Ս. Գրքի քառօրէն և վեցիօրէն հսկայ գործին մէջ՝ գաղափա- րել տուած էր երրայական բնագիրը, դի- մացը՝ Եօթանասնից և միւս յոյն թարգ- մանութիւնները, նշանակելով կամ ուղղե- լով անոնց տարբերութիւնները՝ զանազան աստղածեւ կամ սեպածեւ նշաններով: Այդ գործը շարունակեց Ս. Պամփիլոս վկայն՝ Որոգինեսի աշակերտը՝ նոյնպէս հմուտ, որ տեսնելով թէ Ս. Գրքի օրինակներուն մէջ այլեւայլ վերիպակներ կը մտնուէին տգիտութեամբ կամ չարութեամբ, օրի- նակել տուաւ հարազատ և ճշգրիտ օրի- նակ մը Եօթանասնից թարգմանութեան, համեմատեց զայն Որոգինեսի օրինակնե- րուն հետ՝ պահելով աստղածեւ ու սեպածեւ նշանները, և յանձնեց զայն իր հմուտ բարեկամ Եւսեբիոս Կեսարացւոյն, որ ա- մէն խնամքով պահուի Պաղեստինի Կեսա- րիա քաղաքին դիւանին մէջ: Տարիներ վերջը Մեծն Կոստանդիանոս իմանալով զայս, յիշեալ Պամփիլոսն օրինակը Կե- սարիայէն Բիւզանդիոն բերել տուաւ, և անկէ հարիւրաւոր օրինակներ գաղափա- րել տալով՝ զետեղեց կայսերական գրա-

տան մէջ: Անտարկոյս տեղեակ ըլլալով Սահակ և Մեսրոբ այդ գանձին, փափա- քեցան իրենք ալ անկէ օրինակ մ'ունե- նալ, որով աւելի յարգ ու վաւերականու- թիւն մը պիտի տային իրենց գործին: Հազիւ ստացած այդ թանկագին օրինակը Աստուածաշունչին, Սահակ և Մեսրոբ անմիջապէս ձեռք գարկին՝ օժանդակու- թեամբ զլիսաւորապէս Եզնիկայ և միւս յու- նագէտ աշակերտներուն՝ թարգմանել, կամ Կորեան խօսքով, «հաստատել ճշմարիտ օրինակօք բերելովք», այն է՝ ուղղել, յարդարել, լրացնել նախկին թարգմանու- թիւնը:

Իրապէս, սոյն երկրորդ թարգմանու- թեամբ կամ համեմատութեամբ է՝ որ Աս- տուածաշունչ Գրքին թարգմանութիւնը առաւ իր վերջնական փայլը՝ կնիքը, ինչ- պէս ունինք հիմակ ձեռքերնիս, — հրաշա- լիք մը՝ որ հազարհինգհարիւր տարինե- րու շրջանին՝ ոչինչ կորսուցուցեր է իր մեծութենէն, և դարերուն հոլովելովը՝ այնպիսի մոգիչ հմայք մը ստացեր է, որ բոլոր գիտական և գրական աշխարհին հիացումը գրաւեր է: Գործ մը որ երբեք թառամիլ չի գիտեր, միշտ թարմ, միշտ ա- ոռյգ և կենսալիւր, յաւերժութեան կնիքը կը կրէ վրան, քաշելով ժամանակին հետ խիզախ և անայլայլ: Ի՞նչ է ուրեմն անոր այդ ուժը, այդ կեանքը և հմայքը: Հարկ կայ ըսելու, թէ Ս. Գրքը՝ մարդկային մտքէ և հանճարէ վեր՝ ներշնչում մ'է աստուածային, որուն մէկ խօսքը միայն «Եղիցի լոյս, և եղեւ լոյս», ապշեցուցեր է բոլոր հեթանոս մեծագոյն մտքերը: Անոր հոգեշունչ, վսեմ և լուսեղէն էջե- րուն քով, մարդկային հանճարին ամէնէն գերազանց արտադրութիւնները՝ գրեթէ խեղերանք և մանկական թոթովանքներ են լոկ: Հոն ամէն ինչ խորհուրդ է, գաղտ- նիք, բարձրութիւն և խորութիւն, ուր ո՛չ մէկ միտք՝ որքան նուրբ և սուր՝ կա- ռող է երբեք հասնիլ և թափանցել, մինչեւ որ գերերկրեայ զօրութիւն մը՝ լոյս մը չգայ փարատելու այն խորհրդաւոր մթութիւնը, որուն ներքեւ քողարկուած է



Հայկական Գրչադիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

Ս. ՂՈՒԿԱՍ ԵՒ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻԶՔ

Ճ. — Անտարամ Աղրիամուպոլսի, Թ. 887, ամ գրչութեամ 1007

LES EVANGELISTES St. LUC & St. JEAN

Tétraévangile d'Andrinople. N. 887, an 1007

սրբազան հեղինակին միտքը: Սյուրբիսի գործ մը թարգմանելու համար՝ ո՞վ գիտէ քանիցս մեր Հայրերը, նախ քան ձեռնարկելը իրենց աշխատութեան, կարդացեր՝ խոկացեր են այն սուրբ գրքերը, այն սրբազան հեղինակներուն կեանքը ապրելը՝ երազեր են, իւրացնելու համար անոնց աստուածային հոգին, անոնց զգացումները, ազդուելու և ներշնչուելու անոնց կրակէ շունչէն, որով կրցեր են թափանցել անոնց իմաստներուն խորը, ըմբռնել զանոնց ճշդիւ և հայացնել վայելչօրէն, որով քաղաքի քաղաքներէն յորջորջուեր է: Հոն կ'երեւի հայ լեզուն իր բոլոր ճոխութեան մէջ, իր համայն նրբութիւններով, իր ամենագոյն երանգներով ու ելեւէջներով, պարզ՝ վսեմին միացած, գեղեցիկ՝ ուժեղին, բարկին ու խիստը՝ քնքուշին ու գոգարին հետ ձուլուած, ուսկից անհրեակայելի ներդաշնակութիւն մ'առաջ կու գայ:

Աւելորդ է ըսելս, թէ Ս. Գրքին մեր թարգմանիչները, զանազան գաւառներու գաւառներ, ինչպէս իրենց ինքնագիր երկասիրութեանց՝ այսպէս ալ թարգմանութեանց մէջ, բացի դասական ուստանիկ լեզուէն՝ մուծեր ազդեցեր են մերթ իրենց տեղական կամ գաւառական բառերը և ասացուածները, որոնք կը լսուին տակաւին հայ ժողովրդական լեզուին մէջ: Եւ այսպէս, ոչինչ կայ հոն միօրինակ, այլ ընդհանրական գունագոյն հիւսուած մ'է, որ հաճոյք ու հրճուանք կ'ազդէ մտքին ու սրտին. և այս բոլորը՝ առանց շեղելու երբեք բնագրին ո՞չ միայն իմաստէն՝ այլ նոյնիսկ բառերէն: Ահա մեր թարգմանութեան մեծագոյն արժէքը, որ ուրիշ ո՞չ մէկուն մէջ չ'երեւիր, որով արժանապէս յարգուեր ու ճանչցուեր է ան իբր Դիլոյ բոլոր թարգմանութեանց:

Ը. — Ս. ԳՐԻԳՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԻՆՁ ԲԱԺԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ ՀԱՒԱՆՈՐԷՆ Ս. ՍԱՀԱԿ, Ս. ՄԵՍՐՈՒՅ ԵՒ ԻՐԵՆՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ:

Անշուշտ հետաքրքրական է գիտնալ թէ

ԲԱՑՄԱՎԷՊ — ՍԵՊՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 1935

Սահակ և Մեսրոբ, որոնք ընդհանուր գործին ուղղիչներն ու առաջնորդներն էին, Աստուածաշունչին ո՞ր Գրքերը թարգմաներ են: Երկրորդ, Եզնիկ, Կորիւն և միւս երէց աշակերտները ի՞նչ դեր կամ բաժին ունեցեր են հոն:


Սոյն հարցին ճշդիւ պատասխանելը դժուարին է, քանի որ ժամանակին պատմիչները, — Կորիւն, Խորենացի և Փարպեցի, — շատ քիչ բան աւանդեր են մեզի այս մասին, այն ալ տարտամ և անորոշ, և մերթ նոյնիսկ իրարու հակառակ: Ուրովհետեւ, մինչ Կորիւն և Խորենացի երկու թարգմանութիւն կը դնեն, Փարպեցին մէկ թարգմանութիւն միայն կը ճանչնայ, այն է՝ յոյն օրինակներուն վրայէն եղածը, զոր ամբողջապէս Ս. Սահակայ կ'ընծայէ. իսկ առաջինը՝ ասորերէնէն եղած, ինչպէս նաեւ Ս. Մեսրոբի «Առակաց» գրքին թարգմանութիւնը, զոր այնքան մանրամասնօրէն կը պատմէ Կորիւն, ինքը կ'անգիտանայ բոլորովին, ինչ որ չափազանց տարօրինակ է, քանի որ իրեն միակ աղբիւրը՝ հայ տառերու գիւտին և Աստուածաշունչի թարգմանութեան մասին՝ եղած է Կորիւն, ըստ իր իսկ վկայութեան: Ասոր մեկնութիւնը կամ գաղտնիքը այն է, որ Փարպեցւոյն պատմութեան (Վենետիկի 1873-ի հրատարակութեան) 39-41 էջերուն մէջ ամբողջ թուղթ մը կը պակսի, և անոր տեղ ազդեցութիւնը է Խորենացւոյն պատմութեան (Վենետիկի 1827-ի հրատարակութեան) մէկ թուղթ՝ 518-520 էջերուն, ուր գրեւոր գիւտը միայն կը պատմուի: Կը բաւէ համեմատել Փարպեցւոյն և Խորենացւոյն այդ էջերը, և անմիջապէս ահաներիւ կ'ըլլայ, թէ մինչ Փարպեցին՝ Կորեան հետեւելով՝ Մաշտոց անունով կը ճանչնայ մեր գրերուն հեղինակը, հոս այս երկու էջերուն մէջ Մեսրոբ կ'անուանէ զինքը՝ ըստ Խորենացւոյն, — դարձեալ Կորեան Սամուատ քաղաքը՝ հոս Սամուի փոխուած է՝ ըստ Խորենացւոյն, — և վերջապէս կարգ մը անուններ և դէպքեր կը յիշուին, որոնք անձանօթ են Կորեան,

և միայն խորհնացիէն գիտենք զանոնք: զԺուարագոյն մասը, և վստահ եմ թէ բաց չի
Անժխտելի է թէ Ս. Գրքի թարգմանու- Մովսէսի « Հնգամատենէն », Սաղմոսնե-
թեան մէջ՝ ամենամեծ եղած է Ս. Սահա- րուն, չորս մեծ մարգարէներուն, « Երգ
երգոց»ին թարգմանութիւնը
իր գրչին արդիւնք է: Հոն
կ'երեւի լեզուի ճոխութիւն,
ընտիր ճաշակ, և դասական
բարբառը իր բարձրագոյն
գագաթին հասած, ուր հո-
գեշունչ հեղինակները և հայ
թարգմանիչը միեւնոյն վսեմ
թոփշքն ունին:

Ս. Մեսրոբ՝ « Սուղակաց »
գրչին թարգմանութեամբ՝ կը
թուի արդէն իրեն բաժին
ընտրած ըլլալ խրատական
և բարոյական գրքերը, և հե-
տեալաբար « Եկեղեցատէսի »
կամ « Ժողովոյին », « Սի-
րաքայ իմաստութեան », և
մանաւանդ չորս աւետարան-
ներուն թարգմանութիւնը ի-
րեն ընծայելի է, որոնց մէջ
ներքին և սերտ ազեւս մը
կայ, սահուն և գողտր բան
մը, գրեթէ հայրական շունչ
մը, պարզութիւն և յստա-
կութիւն լեզուի, ժողովրդ-
դեան և մանուկներուն աւելի
հասկնալի և հրապուրիչ ըլ-
լալու համար:

« Իմաստութիւն Սողոմո-
նի », ինչպէս նաեւ « Յո-
բայ » գիրքը, — Աստուածա-
շունչի գոհարներուն ամէնէն
թանկագինները, — ուր ի-
մաստներուն բարձրութիւնը
և երեւակայութեան յան-
դուզն ճախրանքը՝ խանդը,
ինչպէս նաեւ զանոնք ար-
տայայտելու շնորհքը և վա-

յելչութիւնը՝ կը մրցին իրարու հետ, —
ո՞վ պիտի կրնայ ուրանալ՝ թէ այդ զոր-
քերու թարգմանութիւնը Եզնկայ աղա-
մանդիկ գրչէն ելած չըլլայ, որոնց մէջ
կը զգացուի անոր կուռ, սեղմ, զօրեղ



Հայկական Գրչագիրք

Մանգրն. Ս. Ղազարու


ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

6. — Աւետ. Ս. Ներսիսի Ղամբրոմացոյ. Թ. 1635, ամ 1193

LE CRUCIFIEMENT

Tétraévangile de St. Nersès de Lambron. N. 1635, an 1193

կայ դերը, որուն ձեռքն էր գործին դելը,
կ'ուզէր, կը խրախուսէր թարգմանիչնե-
րը, կը յղէր՝ կը յարգարէր անոնց լե-
զուն, վերջին փայլը կու տար անոնց թարգ-
մանութեան: Ինքը ստանձնած էր գործին



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու

7. — ԽՈՐԱՆԱԶԱՐԻ Աւետարանիմ Ղամբրոմի. Թ. 1645, տարի 1193

CANONS DE CONCORDANCE

Tétraévangile de St. N. de Lambron. N. 1645, an 1193

և դասական լեզուն: Յիշեալ գրքերուն
մէջ կ'երեւի մարդկային խոր հոգեբա-
նութիւն մը, ճիգ մը՝ րնութեան սքան-
չելի օրէնքներուն և տիեզերքի հրաշա-
լիքներուն մէջ երեւցող աստուածային
իմաստութեան առջեւ խոնարհեցնելու ըմ-
բոստ ոգիները, և բուն վիճարանութիւն
մը Յորայ և իր երեք բարեկամներուն
միջեւ բարոյական և իմաստասիրական
խնդիրներուն մասին, որոնցմէ անպատ-
ճառ ներշնչուած ըլլալու է « Եզն աղան-
դոց » հոյակապ մատենին հեղինակը, երբ

աստկապէս կը վիճէ՝ կը մաքառի իր հա-
կառակորդ ոսոխներուն դէմ:

« Մակարայեցոց » գրքերուն թարգմա-
նութիւնը՝ ոմանք կորեան կ'ընծայեն, ու-
րիշներ՝ Եղիշէի, ինչ ինչ լեզուական, մա-
նաւանդ շարադրութեան և բերականական
ձեւերու նմանութիւն նշմարելով՝ մեր այդ
երկու հեղինակներուն գործերուն և Մա-
կարայեցոց գրչին մէջ: — Չեմ հակառա-
կիր անոնց՝ որ կորեան կ'ընծայեն գայն,
քանի որ սա իր գրութեան մէջ՝ իրապէս
ճոխ և ճոռոմ՝ արեւելեան բան մ'ունի,

խանդ մը՝ աւիւն մը՝ իր նկարագիրներուն մէջ, ինչ որ ունի Մակարայեցոց գիրքը։ Իսկ Եղիշէի ընծայել այդ թարգմանութիւնը՝ բացարձակ ընդունելի չէ, քանի որ ան՝ Ս. Գրքի թարգմանութեան պահուն (433-435-ին)՝ տակաւին ուսանող պատանի մ'ըլլալու էր։ Իմ կարծիքս է թէ՛ այդ կրակոտ՝ վառվռուն գրքին թարգմանիչը՝ հաւանօրէն Ղեւոնդ երէցն ըլլալու է, հմուտ հայագէտ և հելլենագէտ, Բիւզանդիոն ուսած Եզնկայ և Կորեան հետ, որ ներշնչուած և ազդուած իր թարգմանած գրքէն, իբր այլ ոմն Մատթիի կը վառէ՝ կ'ոգեւորէ հայ բանակը Աւարայրի ճակատամարտի նախօրեկին, և իրմէ անբաժան՝ վարդան Մամիկոնեան՝ իբր այլ ոմն Յուդա Մակարէ, — որոնք ընթերցելով և բացատրելով Մակարայեցոց գիրքը՝ հայացած նոյն իսկ Ղեւոնդէն, կը խրատուեն հայ մարտիկները՝ երկնաւոր քան երկրաւոր յաղթանակին տեսիլքով՝ արիանալ և նահատակուիլ կրօնքին և հայրենիքին համար։ Եւ այսպէս սուրբ և արին Ղեւոնդ՝ Մակարայեցոց թարգմանիչը՝ Մատթի Մակարայեցոյն զիցազնական զերը կը կատարէ։

Գալով Կորեան, — ոչ նուազ յունագէտ և հայագէտ քան Եզնիկ, — չափազանց համեստ՝ որ իր մասին ո՛ր եւէ ակնարկ չ'ընէր՝ մինչ իր միւս աշակերտակիցները կը յիշէ և կը պրտատէ, — ճշմարիտ պատմիչի մը բոլոր ձիրքերով օժտուած, ինչպէս ցոյց կու տայ իր ինքնագիր երկասիրութիւնը, բնականաբար Աստուածաշունչին կարեւոր պատմական գրքերը թարգմանած ըլլալու է, ինչպէս Դատաւորաց և Թագաւորաց, — Եսթերի, Յուդիթի, եւն., ուր իր ճաշակին և գրչին վայել՝ ճոխ, գեղեցիկ նկարագիրներ, յուզիչ տեսարաններ, քնարերգական վսեմ երգեր և օրհնութիւններ կան, ինչպէս Դերովրայի, Սամուէլի, Դաւթի. եւայլն։

Աստուածաշունչի միւս գրքերուն թարգմանութիւնը, — փոքր Մարգարէներուն, Մնացորդաց, Եզրի, եւն., — կարելի է ընծայել միւս երէց աշակերտներուն, —

Յովսէփ Պաղնացոյն, Յովհան Եկեղեցայնոյն, Տէր Խորձենացոյն, Մուշէ Տարօնեցոյն, Արձան Արծրունւոյն, — որոնք մեծ զրուարեցով կը յիշուին Կորեանէն, Խորենացիէն, Փարպեցիէն՝ իբր նշանաւոր թարգմանիչներ, հմուտ յոյն և ասորի լեզուներուն։ Դժբախտաբար, ասոնցմէ ինքնագիր գործեր հասած չըլլալով մեզի, կարելի չէ գաղափար մ'ունենալ անոնց լեզուին և ոճին նկատմամբ, ըստ այնմ որոշելու անոնց բաժինը Ս. Գրքի թարգմանութեան մէջ։

Թ. — ԻՆՓԵՆԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ս. ՍԱՀԱԿԱՅ, Ս. ՄԵՍՐՈՒԹԻ ՄԻՒՍ
ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒՆ.

Անցնինք արդ համառօտիւ ակնարկ մը տալու ինքնագիր աշխատութեանց մեր Ոսկեղարի մատենագիրներուն, սկսելով Ս. Սահակէն, որ իր բարձր աստիճանին անթիւ պարապուսներուն մէջ, եկեղեցական և քաղաքական հոգերով ծանրաբեռնուած, կրցաւ իր ինքնագիր երկասիրութեամբ ալ ճոխացնել մեր ազգային գրականութիւնը։ Ո՞վ չի գիտեր իր վարդապետական հմուտ թուղթերը առ Ատտիկոս և Պրոկղ Հայրապետները Բիւզանդիոնի, առ Ակակ եպիսկոպոսը Մելիտինէի, առ Թէոդոս Կայսրը և առ Անատոլիոս իշխանը՝ զանազան առիթներով գրուած, որոնց մէջ ոչ նուազ պատկառելի կը հանդիսանայ իր բարձր հեղինակութեամբ և հոգւոյն օծութեամբ՝ որքան իր նուրբ քաղաքագէտ տեսութեամբը։ Որո՞նք անծաղաքաբէալ իմաստուն կանոնները, որոնցմով կ'ուղղէ և կը հրահանգէ ամբողջ եկեղեցական դասը՝ եպիսկոպոսներէն սկսած մինչեւ վանականները և երէցները, իշխաններէն մինչեւ յետին զինուորը և քաղաքացին, որոնց մէջ կ'երեւի իբր վարդապետ մը, հովիւ մը և մանաւանդ աստուածաբեալ հայրապետ մը։ Չանց կ'ընեմ հոս յիշել այն վսեմ և հոգելից շարականները՝ Ղազարու յարութեան, և մանաւանդ Աւագ շարթուն, որոնք Ս. Հօրս

բեղնաւոր և եռանդուն գրչին ծնունդ են, և որոնց մէջ ամէնէն յուզիչ գոյներով կը պատկերանայ աստուածային ողբերգութեան տեսարանը։

Ս. Մեսրոբ ոչ նուազ մեծ է իր թարգմանութիւններով և առաքելական գործունէութեամբ՝ որքան իր «Յաճախապատում» երկասիրութեամբ, զոր այնքան կը զրուատէ իր կենսագիրը Կորիւն, — ուր ամփոփուած են քրիստոնեայ կրօնքին հիմնական վարդապետութիւնները, բարոյական պատուէրները և հրահանգիչ խրատները։ Այդ գրքին շնորհիւ է՝ որ գիտենք այն ժամանակի հայ վանական կեանքին և մենաստաններուն ծաղկած, բարգաւաճ և կարգապահ վիճակը, որուն ինքը կենդանի օրինակն էր։ Իրեն կը պարտինք գլխաւորապէս մեր եկեղեցական պաշտամանց ու ծէսերու այն չքնաղ յօրինումներուն, որոնք մինչեւ այսօր մեր և օտարներուն հիացումը կը շարժեն։ Իրեն կ'ընծայուին նոյնպէս Յինանց և Պահոց այն պարզ և հոգեցունց շարականները, որոնք՝ չգիտեմ՝ ինչպիսի՜ աստուածային բան մը ունին, որ կը յուզեն՝ կը գործեն ամէնէն սառ սրտերը։

Հարկ կայ ծանրանալ «Եղծ ազանդոց» անգին մատենիկին հեղինակին վրայ, որ մեր Ոսկեղարու դասական լեզուին սիրահար բոլոր գրագէտներուն ամէնէն սիրուածն ու պաշտուածն է։ Ան՝ աստուածաբան և իմաստասէր և կորովի տրամաբան մը, կը պայքարի հեթանոս իմաստուններուն դէմ, կը քանդէ՝ կը տապալէ անոնց մոլար զրութիւնները։ Կ'ըմբերանէ Մարկիոնի և անոր համախոհներուն շամբու աղճատանքները։ Ան բնագէտ մ'է նաեւ, բնութեան օրէնքները կը հետազօտէ, արեւուն, աստեղաց շարժումները և տիեզերական կարգը կ'ուսումնասիրէ, կենդանիներուն բնագոյները և բոյսերուն յատկութիւնները քննութեան կ'առնէ, միով բանիւ՝ ամենագի հմութիւն ցոյց կու տայ իր փոքրիկ գրքոյկին մէջ։

Կորիւն, մեր Ոսկեղարի կարկառուն դէմքերէն մին, «Սքանչելի» մակդիրով ու

րակուած, իր գրութեան յատուկ ոճով և լեզուով, մեր թարգմանիչներուն առանձին դասակարգի մը գլուխը կը համարուի հայագի նշանաւոր բանասէրներէ։ Իր գլուխ գործոցն է «Պատմութիւն վարուց Մաշթոց վարդապետի», որով անմահացուցեր է իր մեծ ուսուցիչը, ինքն ալ անմահանալով այդ փոքրիկ գրքոյկով, որուն արժէքը և յարգը այնքան մեծ է, որ առանց անոր՝ գրեթէ մթութեան մէջ թաղուած պիտի մնար մեր Ոսկեղարը։ Իրեն պէս «սքանչելի» է իր գրութիւնն ալ, պերճախօս, ճոխարան, բայց ոչ միշտ յատկ և կանոնաւոր, ինչպէս են Եզնիկ և Եղիշէ, որով զերծ չէ մթութիւններէ։ Անկարող կ'ըլլայ ան զսպելու խանդը և թափը, երբ իր վարդապետին անուր և աներեւակայելի ճգնութիւնները և գործունէութիւնը կը նկարագրէ։ Ինքը՝ կամ հաւանօրէն իր վրայ հիացող մը՝ թարգմաներ և խմբագրեր է Ազաթանգեղոսի անուամբ հասած պատմութիւնը, որուն ամէնէն գեղեցիկ էջերը Կորեան գրութենէն առնուել և գետեղուել են հոն, և պիտի չխղճէի նոյնիսկ Բիւզանդիոն պատմութիւնը իր կորովի մտքին և նկարագրող գրչին ծնունդ համարել, եթէ չըլլային հոն այնպիսի լպիրշ էջեր, որոնք ո՛չ թէ Կորեան պէս սրբասուն հոգի մը՝ այլ ո՛ր եւ է պարկեշտ աշխարհիկ մը պիտի զգուեցնէին։

Մովսէս Խորենացի։ Ինչ միտք, ինչ կարողութիւն, գրեթէ երկու հազար տարիներու պատմութիւնը ամփոփել փոքրիկ հատորի մը մէջ. ինչ ստեղծագործ հանձար, դարերու փոշիէն երեւան հանել ազգի մը գոյութիւնը։ Այո՛, իր պատմութեան սկիզբը առասպելներով խառն է՝ մշուշով պատած. բայց ո՞ր ազգին ծագումը այդպէս չէ։ Իր գրքին առաջին մասին ուղեգիծ և առաջնորդ ընտրել է հրէական ազգին պատմութիւնը, ինչպէս նաեւ Եւսեբիոսի Քրոնիկոնը, մինչեւ Մեծին Աղբաւանդի աշխարհակալութիւնը եւ Մակեդոնական կամ Սելեւկեան տիրապետութիւնը, անկէ վերջը կը կապէ իր պատմութեան թելը՝ մեր դրացի և խնամի Պարթեւներու իշխա-

նութեան հետ, ուսկից կը սկսի նոր դարա-
գլուխ մը՝ նախ Արտաշատի և յետոյ Ար-
շակունի Հարստութիւններով։ Այդ շրջանին
է որ հայ ազգը կ'ըլլայ անկախ՝ աշխար-
հակալ, իր մեծ՝ հզօր՝ ուսումնասէր և
մերթ քանաստեղծ թագաւորներով, որոնց
անունները ծանօթ են ամէնուն, որոնք կը
յիշուին Կիլիկիոյնի ճառերուն, Տակիտոսի
Տարեգրքին և Պլուտարքոսի Զուգակշիռնե-
րուն մէջ։ Եւ սակայն այսպիսի մեծանուն
պատմիչ մը, մեր Ոսկեդարու պարծանքնե-
րէն մին, զերծ չմնաց դարուս բծախնդիր
քննադատներուն սլաքներէն, որոնք կ'ու-
զեն տանիլ՝ վտարել զինքը հինգերորդ դա-

րէն մինչեւ եօթներորդ և ութերորդ դա-
րերը։ Եւ սակայն խորենացին՝ որ դարու
ալ պատկանի՝ ամէնէն մեծ հայ դէմքերէն
է, ամէնէն մեծ պատմիչը մեր ցեղին, հայ
Հերոգոտոսը, հայ Տակիտոսը, որուն ծո-
վածաւալ հմտութիւնը, կենդանի նկարա-
գիրները, մանաւանդ իր ուժեղ, հատու-
սեղմ ոճը կը հիացնէ կ'ապշեցնէ մարդս։
Ո՞վ կարող է մըցիլ՝ ոչ թէ հաւասարիլ՝
անոր բուն խանդին և գրելու արուեստին,
որով հիւսեր՝ աւանդեր է մեր նահապետ
Հայկ դիւցազին և անոր քաջարի թոռնե-
րուն հոյակապ դրուագները, ոչ թէ ստեղ-
ծելով իր վառվռուն երեւակայութենէն,



Հայկական Գրչագիրք


Մանդրն. Ս. Ղազարու.

ՍԿԻԶԲՆ ՄԱՐԿՈՍԻ

8. — Աւետարան Ս. Ն. Լամբրոնեցւոյ. Թ. 1645, ամ գրչութեամ 1193

DEBUT DE St. MARC

Tétraévangile de St. N. de Lambron, N. 1645, an 1193



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

ՃԱԿԱՏ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

9. — Աւետարան Տրապիզոնի. Թ. 1490, ԺԲ Դար.

DEBUT DE L'EVANGILE DE St. JEAN

Tétraévangile de Trébizonde. N. 1490, du XIIe Siècle

այլ նոյնիսկ ազգային գրոյցներէն և Գողթան երգերէն քաղելով, և պատմական ձեւ տալով անոնց: Օրինակ. մեր Հայկ նահապետը՝ Խորենացւոյն ըղեղին ծնունդ համարուած՝ այնքան հին և այնքան ժողովրդական էր մեր մէջ, որ նոյնիսկ երկրորդ Համաստեղութեանց կարգը դասուեր է՝ փոխանակ Որինի՝ Յովբայ հրաշալի գրքին մէջ, մեր երանելի թարգմանիչներուն գրչով, երբ տակաւին Խորենացին պատանի ուսանող մ'էր, և այսպէս ամպերուն մէջէն կը հարցնէ Աստուած Յովբայ. «Խելամո՞ւտ իցես կարգի Բազմաստեղաց, և քո բացեալ իցէ զպատրուակ Հայկին»: Խորենացին՝ միով բանիւ՝ մեր ազգային փառքերուն և պարծանքներուն երգիչն է, մեր յաղթական թագաւորներուն և զիւցազներուն քերթողը, որուն ամէն մէկ էջը՝ պանծալի արարքներու զրուագ մ'է, ամէն մէկ բառը՝ ամէն մէկ տողը փառաբանում մ'է մեր անցեալին, ուր սրտերնիս կը բաբախէ, շունչերնիս կը լայննայ, կ'ոգեւորուինք և կը պարծինք հայ ըլլալնուս համար... անա՛ խորենացին:

Դաւիթ «անյաղթ» փիլիսոփայ, ինչ նախանձելի մակդիր, նոյնիսկ իր մրցակից յոյն ընկերներէն տրուած, երբ տակաւին պատանի՝ հելլէն հոգին վրայ, անշուշտ Աթէնքի մէջ, վիճելով իր յոյն ուսումնականներուն հետ, ինքն էր միշտ յաղթողը՝ իր նրբամիտ պատասխաններով և մերթ հեզնոգ կծու սրախօսութեամբը: Իր լեզուն, զժբախտաբար, ինչպէս ոճը և քերականական կազմութիւնը՝ ոսկեղաբեան չեն, այլ աւելի հելլենաբան. բայց իր խորունկ հմտութեամբը, իր ուժեղ տրամաբանութեամբ և նուրբ տեսութիւններով՝ պատիւ կը բերէ հայ մտքին և իրաւամբ կը գրաւէ իր աթոռը Ոսկեղարու հեղինակներուն մէջ: Իր գլխաւոր երկասիրութիւններն են, «Սահմանք իմաստասիրութեան», սկեպտիկեան զրութեան հիմնադիր Պիւտոնի գէմ գրուած, — և Պորփիրի «Մեկնութիւնք տասն Ստորոգեւեաց Արիստոտելի» գիրքը թարգմանած և ճշգրտացած հան-

ճարեղ դիտողութիւններով, հիացող մ'ըլլալով ինքը Արիստոտէլի և հետեւող մը անոր զրութեան: — Գիւտ կաթողիկոսին խնդրանքով գեղեցիկ ճառ մը գրեւ է ի պատիւ՝ Ս. Խաչին, որով կը պանծացնէ անոր ընծայուած պաշտօնը և յարգանքը և որուն մէջ ցոյց տուած կրօնական զգացումները, իմաստները և հայերէն լեզուն կ'արդարացնեն իր մեծ համբաւը:

Յովհան Մանդակունի և Մամբրէ վերձանող, — մին՝ կաթողիկոս և միւսը՝ վարդապետ, երկուքն ալ հմուտ աստուածաբանական խնդիրներու, հոգեսէր և ազգասէր անձնաւորութիւնք, — իրենց բոլոր տաղանդը, իմացական և բարոյական ուժերը և ձիրքերը նուիրեւ են ի պաշտպանութիւն և ի պարծանս կրօնքին, հայրենիքին և հայ զրականութեան: Մանդակունւոյն քսանեւութ վարդապետական ճառերը, ինչպէս Մամբրէի երկու ճառերը՝ Ղազարու յարութեան յիշատակին և Ծաղկազարդի տօնին առթիւ, պերճախօսութեան և գեղեցիկ իմաստներու ակունքներ են, որոնց մէջ կը փայլի աստուածային հոգի, երկնաւոր օծում մը, եռանդ և նախանձ սրբութեան և ճշմարտութեան՝ հաւասար յոյն Ս. Հայրերուն, որոնցմով կրնան պարծիլ արժանապէս հայ եկեղեցին և հայ զրականութիւնը:

Եղիշէ, — հայ Քսենոփոնը և մեր Ալիշանին «Պլպուլն Աւարայրի», — գեղգեղուն, քաղցրախօսիկ, բանաստեղծ պատմիչը հայերուս, որուն ամէն խօսքը մեղր կը կաթէ, ամէն բառը զայլայլիկ մ'է, ամէնէն շատ սիրուած և կարգացուած հեղինակն է, որուն գիրքը զիւցազներգութիւն մ'է «Վարդանայ և Հայոց պատերազմին», այնպիսի յուզիչ նկարագիրներով, որոնք կը տանին մեզ նոյնիսկ Աւարայրի դաշտին վրայ, ուր կը տեսնենք հայ զինուորներուն զիւցազնական խառնուրդը, զիրկ ընդ զիրկ մաքառումը պարսից դէմ, անոնց զէնքերուն շողշողումը, կը լսենք վահաններուն կոփիւնը, նետերուն շաչիւնը և աղեղներուն շկահիւնը, և վերջապէս արիաբար նահատակումը մեր

քաջերուն: Կարելի է երեւակայել աւելի գողար և աւելի գորովիչ բան մը՝ քան նահատակուող և գերի տարուած նախարարներուն տիկնանց աղիողորմ և չարատանջ կեանքին սրտաճմլիկ նկարագիրը, որ կը սկսի «Տիկնայր փափկասունք Հայոց աշխարհին» բառերով: Ո՞վ կարող է կարգալ այդ էջերը առանց լալու, էջեր՝ որ համակ արցունքով գրուեր են:

Մեր Ոսկեղարու վերջին հեղինակն է՝ Ղազար փարպեցի, «ճարտասան» կոչուած իր հետորակաւ արուեստին համար, որուն հատորիկը աւելի քան հարիւր տարիներու դէպքեր կը պատկերացնէ, սեղմ և կուռ ոճով, պարզ և անպաճոյճ լեզուով, մերթ նոյնիսկ ժողովրդական բաներով և ասացուածքներով: Իր զիւցազն է՝ Վահան Մամիկոնեան, ուսկից վանահայր կարգուած Էջմիածնի մենաստանին, ուսմամբ և սրբութեամբ կը պայծառացնէ զայն, և ճիշդ ասոր համար՝ իր իսկ նախանձոտ արեղաներէն կը զրպարտուի և կը հալածուի, և ի վերջոյ՝ իր գեղեցիկ թուղթով առ Վահան Մամիկոնեան՝ արդարացած, կը հաստատուի իր վանահայրութեան մէջ և անոր յանձնարարութեամբ կը գրէ իր պատմութիւնը: Չունի ինքը Եղիշէի քերթողական խանդը, բայց ստոյգ պատմիչ մը կարեւոր ձիրքերով օժտուած՝ գեղեցիկ ոճով կը պատմէ դէպքերը, քանի մը սիրուն զրուագներով հմայիչ ընելով իր զրութիւնը, ինչպէս են՝ Այրարատեան դաշտին սխրալի նկարագիրը, և մանաւանդ եղերական հանդիպումը Ղեւոնդեանց և Վասակ մատնչին. վերջինս Պարսկաստան կ'երթար իր ազգուրաց արարքներուն վարձքն ընդունելու, որուն կ'որոտայ Ղեւոնդ իր մարգարէաշունչ ձայնով. —

«Եթէ դու ողջ՝ գլուխդ ուսերուդ վրայ՝ Հայաստան դառնաս, այն ատեն Աստուած հետս խօսած չէ»...: Յետ պատմելու Վահանի պատերազմները, յաղթանակները, և վերջապէս անոր մարգարան կարգուիլը Հայաստանի՝ կ'աւարտէ փարպեցին իր գիրքը:

Ահա՛ մեր Ոսկեղարի աղօտ ստուերագիրը՝ զոր գծեցի ձեր առջեւ, լոկ գաղափար մը տալու անոր, որուն իրական պատկերը այնքան մեծ, շքեղ և լուսաւոր է, զոր անկարելի է ներկայացնել քանի մը էջերու մէջ: Անոր իսկական գաղափարը տալու համար հատորներու պէտք կայ:

Սոյն հանդէսը, ինչպէս բանախօսութիւնները, երգերը եւն. ուրիշ բան չեն՝ բայց լոկ յարգանքի, հիացման և շնորհակալութեան արտայայտութիւն մը ի պատիւ մեր Ս. Հայրերուն, թարգմանիչներուն և հեղինակներուն Ոսկեղարի, որոնք այնքան պանծալի ըրին հայ անունը և ազգը բովանդակ գիտական և զրական աշխարհի առջեւ, որ իրենց կը պարտինք բոլորս ալ՝ ինչ որ ունինք և ենք այսօր, որով խորապէս երախտապարտ պէտք է ըլլանք իրենց, յաւերժապէս քանդակուած պահելով մեր սրտերուն մէջ անոնց անունները, «և յիշատակ նոցա եղիցի՝ օրհնութեամբ»:

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

Սոյն բանասիրական հմտալից յօդուածը բանախօսութիւնն է զոր Գեր. Հեղինակը կարդաց՝ Աստուածաշունչի հոգարհինգհարիւրամեայ շքեղ հանդիսին մէջ, որ կատարուեցաւ Սեբի Մուրատեան Վարժարանին կողմէն, Պէշիքթաշէան թատերասրահին մէջ՝ տարւոյս Մայիսի 26ին:

ԾԱՆ. ԽՄԲ.



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

Ս. ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

10. — Ստեփաննոսի Սրապիգոնի. թ. 1490, ԺԲ Դար

L'EVANGELISTE St. LUC

Tétraévangile de Trébizonde. N. 1490, du XIIe Siècle



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

11. — Ստեփաննոսի Սրապիգոնի. թ. 1490, ԺԲ Դար

L'EVANGELISTE St. JEAN

Tétraévangile de Trébizonde. N. 1490, du XIIe Siècle